ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԸ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ (1921—1940)

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՀՄ-ում կուլտուրական հեղափոխության իրականացման կարևորագույն խնդիրներից մեկը անգրագիտության վերացումն էր։ Դա բնական էր և հասկանալի, քանի որ մեր երկրի բնակչության շուրջ 85%-ն անգրագետ էր, իսկ ազգային շրջաններում այդ տոկոսը շատ ավելի բարձր էր։ «Անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի»[1],— ասել է Վ. Ի. Լենինը։ «Վ. Ի. Լենինը նոր կարգերի զարգացման գլխավոր ուժը տեսնում էր դեմոկրատիզմի, աշխատավորների կենդանի ստեղծագործության մեջ,— ընդգծեց ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը հուսակցության XXVII համագումարին տված Քաղաքական հաշվետվությունում։—Նա, ինչպես ուրիշ ոչ ոք, հավատում էր ժողովրդին, հոգում մասսաների քաղաքական ակտիվության և կուլտուրայի բարձրացման մասին, ընդգծելով. որ անգրագետ մարդը քաղաքականությունից դուրս է կանգնած»[2]։ Ահա թե ինչու Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո սովետների երկիրը կոմունիստական կուսակցության առաջնորդությամբ ձեռնամուխ եղավ այդ դժվարին, բայց և հույժ կարևոր խնդրի իրագործմանը։

Վ. Ի. Լենինի անմիջական նախաձեռնությամբ 1919 թ. դեկտեմբերի 26-ին հրապարակվեց ՌՍՖՍՀ բնակչության անգրագիտության վերացման մասին նշանավոր դեկրետը։ Լենինյան այդ դեկրետում առաջադրված դրույթներն ուղենիշ հանդիսացան սովետական բոլոր հանրապետություններում, այդ թվում և Սովետական Հայաստանում անգրագիտության վերացման գործի կազմակերպման համար։ 1921 թ. սեպտեմբերի 21-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվում է դեկրետ «Հայաստանի սահմաններում անգրագիտությունը վերացնելու մասին»։ Այդ դեկրետի համաձայն 16—50 տարեկան բոլոր անգրագետները պարտավոր էին գրագիտություն սովորել մայրենի լեզվով հատուկ դպրոցներում[3]։

Անգրագիտության վերացման հարցը դարձավ համաժողովրդական գործ։ Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ այդ գործին լծվեցին արհմիությունները, կոմերիտմիությունը, քաղլուսավորության մարմինները, ուսուցիչները, «Կորչի անգրագիտությունը» ընկերությունները և այլ ուժեր։ Անգրագիտության վերացման գործում մեծ ավանդ ունեն նաև աշխատավորների դեպուտատների սովետները։

Սովետական Հայաստանում կուլտուրական շինարարության և նրա կարևոր հարցերից մեկի՝ անգրագիտության վերացման համար մղված պայքարը բավականին հանգամանորեն ուսումնասիրվել է սովետահայ պատմաբանների կողմից (Կ. Խուդավերդյան, Ա. Աբրահամյան, Զ. Գրիգորյան, Վ. Ղա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 375։

2 «Սովետական Հայաստան», 26. II. 1986։

3 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», էջմիածին, 1921, էջ 63։

զանջյան և ուրիշներ)[4]։ Սակայն նրանց ուսումնասիրության շրջանակներից դուրս է մնացել այնպիսի կարևոր հարց, ինչպիսին հանրապետության սովետների խաղացած դերի բացահայտումն է անգրագիտության վերացման համար մղված պայքարում։

Հայաստանի սովետների առաջնահերթ գործը եղավ հանրապետությունում անգրագետ բնակչության հաշվառումը։ Այդ նպատակով հեղկոմները ստեղծեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք, շրջելով բնակավայրից-բնակավայր, տեղերում ուսումնասիրելով իրավիճակը, կազմեցին անգրագետների ցուցակները։ Հաշվառման ենթարկված անգրագետները ներգրավվեցին անգրագիտության վերացման խմբակներում։ Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ տարում Հայաստանի գրեթե բոլոր գավառներում սկսեցին գործել անգրագիտության վերացման խմբակներ, որոնք գործուն աջակցություն էին ստանում սովետների կողմից։

Անգրագիտության վերացման գործով լայն աշխատանք ծավալեցին գավառներում կազմակերպված քաղաքական լուսավորության բաժինները (քաղլուսբաժիններ)։ Այսպես, 1922 թ. հունվարի 25-ին կազմակերպվում է Երևանի գավառի քաղլուսբաժինը, որի նույն թվականի հաշվետվության մեջ նշվում է, որ «քաղաքում արդեն կազմակերպված են 16 գրագիտության խմբակներ։ Ուսուցիչների թիվը հասնում է 15-ի, որոնք անցել են իրենց պարտականությունների կատարմանը։ Մեր ուղարկած հանձնաժողովները անցել են անգրագետների ցուցակագրմանը, մոբիլիզացրել են տեղական կարող ուժերին և բացել են անգրագիտության վերացման կայաններ»։ Զեկուցագրում հաղորդվում էր նաև, որ անգրագիտության վերացման խմբակներ են բացվել Ախտայի (այժմ Հրազդան) շրջանի 19 և Կոտայքի (այժմ Աբովյան) շրջանի 14 գյուղերում։ Իսկ Բաշգյառնու շրջանում (այժմ Գառնի) գործող լիկկայաններում սովորող 180 անգրագետներից 60-ը արդեն վերացրել էին իրենց անգրագիտությունը[5]։

Անգրագիտության վերացման հարցը քննարկման էր դրվում սովետների ամենատարբեր խորհրդակցություններում, հասարակական ժողովներում, համագումարներում և մշակվում էին համապատասխան միջոցառումներ։ Այսպես, Նոր Բայազետի (այժմ Կամո) գավառային գործադիր կոմիտեի 1923 թ. մայիսի 25-ին տեղի ունեցած նիստի որոշման մեջ առաջնահերթ խնդիր է համարվում անգրագիտության դեմ պայքարի ծավալման անհրաժեշտությունը։ Նիստում որոշում է կայացվում նաև գյուղերում կազմակերպել լիկկայաններ, դրանց աշխատանքներում ներգրավելով ուսուցիչներին և այն անձանց, ովքեր կարող էին սովորեցնել անգրագետներին[6]։

Այսպիսով, առաջին քայլերը, որոնք հանրապետության սովետների կողմից իրագործվեցին անգրագիտության վերացման գործը կանոնավորելու նպատակով, զգալի էին և հուսադրող։ 1923 թ. Երևանի գավառում գործում էին 56, Զանգեզուրում՝ 40, Լոռի-Փամբակում՝ 39, Դարալագյազում (այժմ Եղեգնաձոր)՝ 20, Էջմիածնում՝ 50, Նոր Բայազետում՝ 30, Դիլիջանում՝ 21 և Մեղրիի գավառում 10 լիկկայաններ[7]։ Նկատելի էին նաև որակական տեղաշարժերը։ Այսպես, եթե 1922 թ. Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) գավառում գոր-

---

[4] К. С. Худавердян, Культурная революция в Советской Армении, Ереван, 1966, его же, Культурное строительство в годы первой пятилетки, Ереван, 1959; Ա. Աբրահամյան, Ժողովրդական կրթության նվաճումները Սովետական Հայաստանում, Երևան, 1959, Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (Հետհոկտեմբերյան ժամանակաշրջան), Երևան, 1967, Վ. Ղազանչյան, Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964։

[5] Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՊՇՊԿԱ), ֆ. 133, ց. 1, գ. 656, թ. 4, 74։

[6] «Խորհրդային Հայաստան», 15. VI. 1923։

[7] ՀՍՍՀ ՀՊՇՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 815, թ. 9։

ծում էին 33 լիկկայաններ, որտեղ հաճախում էին 478 անգրագետներ, ապա հաջորդ տարում անգրագիտության վերացման կայանների թիվը հասնում է 56-ի, որտեղ գրագիտություն էր սովորում 1094 մարդ[8]։

Գնահատելով անգրագիտության վերացման առաջին տարիների դրական արդյունքները՝ միաժամանակ պետք է նկատել, որ աշխատանքներն այդ ուղղությամբ իրականացվում էին ոչ բավարար պլանաչափ։ Այսպես, անգրագիտության վերացմանը խանգարում էր նյութական միջոցների անբավարարությունը։ Օրինակ, 1922 թ. Երևանի գավառի քաղլուսվարը գործադիր կոմիտեին հայտնում էր, որ «այն միջոցները, որոնք մինչև այժմ տրամադրվել են քաղլուսվարին, բոլորովին չեն համապատասխանում այն ծանրակշիռ նպատակին, որ դրված է նրա առջև»։ Մեղրու գավգործկոմի 1923 թ. ապրիլի 1-ին կայացած նիստում նշվում է, որ «լիկկայանների աշխատանքը գյուղերում կաղում է, որովհետև քաղլուսվարը, զուրկ լինելով տնտեսական միջոցներից, չի կարողացել նրանց կարիքները հոգալ»[10]։ Գործին խանգարում էին շատ թե քիչ հարմարավետ շենքերի բացակայությունը և տեխնիկական անհարմարությունները։ Մուր կերպով էր զգացվում նաև փորձված և հմուտ ուսուցիչների կարիքը։ Շատ լիկկայաններում չէին բավականացնում ամենաանհրաժեշտ գրպիտույքները, վատ էր համապատասխան դասագրքերով ապահովելու գործը։ Այսպես, Երևանի քաղլուսվարի 1922 թ. զեկուցագրում ասվում էր. «Պետք է խոստովանել, որ անգրագիտության վերացման գործը տարվել է վերին աստիճանի դժվարին պայմաններում։ Խմբակները իրենց տրամադրության տակ չեն ունեցել դասագրքեր և բավարար քանակությամբ գրենական պիտույքներ»[11]։ Էջմիածնի գավառի քաղլուսվարի 1923 թ. տարեկան զեկուցագրում այդ կապակցությամբ ասվում էր, որ «գավառի բնակչության միայն 17%-ն է գրագետ։ Պարապմունքները տարվել են անբավարար կերպով, տեխնիկական անհարմարությունների պայմաններում»[12]։

Անգրագիտության վերացմանը խանգարում էին դաշտային աշխատանքները, որոնց սկսվելուն պես շատ լիկկայաններ ուղղակի դադարում էին գործել։ Չկար այդ գործը աշխատանքից հետո կազմակերպելու ճկունություն, բացակայում էին դաշտային շրջիկ լիկկայանները։ Այդ առումով բնութագրական է Ալեքսանդրապոլի գավառի Ղազանչու շրջանային գործադիր կոմիտեի լուսավորության բաժնի 1923 թ. տարեկան հաշվետվությունից հետևյալ հաղորդումը. «մարտ ամսվա ընթացքում ունեցել ենք 9 լիկկայան՝ 183 սովորողներով։ Նույն ամսի 15-ից բոլորն էլ աստիճանաբար քայքայվել են և լիկվիդացիայի ենթարկվել, քանի որ սովորողները գնացել են աշխատանքի»[13]։

Որոշ գավառներում անգրագիտության վերացման աշխատանքներն ընթանում էին բավականին դանդաղ, մեծ էին ոմկնդիրների բացակայությունները։ Էջմիածնի գավառային հեղկոմի 1921 թ. զեկուցագրում ասվում էր, որ «անգրագիտության վերացումը, չնայած մեր հրահանգներին, արագ չի կատարվում»[14]։ Նույն գավառի հեղկոմին ուղարկված գրության մեջ լուսավորության բաժինը հաղորդում էր, որ «անգրագետ բանվորները գրագիտության դասերին չեն հաճախում։ Դասատուները ամեն օր սպասում են նրանց դպրոցում, բայց յուրաքանչյուր խմբից գալիս են 2—6 հոգի, որոնց հետ պարապելն էլ անհնար է»[15]։

---

8 Նույն տեղում, ֆ. 131, ց. 3, գ. 495, թ. 2։
9 Նույն տեղում, ֆ. 133, ց. 1, գ. 153, թ. 27։
10 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 162, թ. 62։
11 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 762, թ. 62։
12 Նույն տեղում, ֆ. 134, ց. 1, գ. 36, թ. 28։
13 Նույն տեղում, ֆ. 131, ց. 7, գ. 93, թ. 18։
14 Նույն տեղում, ֆ. 143, ց. 1, գ. 153, թ. 27։
15 Նույն տեղում, գ. 139, թ. 48։

Հասկանալի է, որ նման իրավիճակն անհրաժեշտաբար պահանջում էր դիմել անգրագիտության վերացման կազմակերպական նոր լուծումների։ Եվ 1923 թ. նոյեմբերին ստեղծված «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը (ԿԱՆ) անգրագիտության դեմ պայքարի պատմության կարևոր իրադարձությունը հանդիսացավ։ Այդ ընկերության առաջին նախաձեռնողները եվրոպացիներն էին։ ԿԱՆ-ի կենտրոնական խորհուրդը ղեկավարում էր համամիութենական կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Մ. Ի. Կալինինը։ Շուտով անգրագիտության վերացման ընկերություններ ստեղծվեցին նաև Սովետական Հայաստանում՝ ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահի տեղակալ Ռ. Պ. Դաշտոյանի նախագահությամբ։ «Կորչի անգրագիտությունը» ընկերության հիմնական նպատակը գյուղում կատարվող աշխատանքն էր։ Սովետների կողմից անգրագիտության դեմ պայքարի ուժեղացման գործուն ձևերից էին առանձին օրերի, շաբաթների և միամսյակների անցկացումը, որոնք մշտական էին դարձել նրանց աշխատանքում։ Այդ օրերին լայն կամպանիա էր ծավալվում անգրագետներին լիկկայաններում ներգրավելու ուղղությամբ, նրանց հետ դրույցներ էին կազմակերպվում գիտելիքների դերի մասին, տրվում էին դասագրքեր և այլն։ Այսպես, օրինակ, 1924 թ. հունիսի 5—12-ը Երևանի գավառային գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ գավառում անց է կացվում անգրագիտության վերացման շաբաթ, որի ընթացքում գավգործկոմի պատասխանատու աշխատողները քաղլուսվարի հետ միասին այցելում են լիկկայանները և, տեղում ուսումնասիրելով անգրագիտության վերացման աշխատանքների վիճակը, ցույց են տալիս անհրաժեշտ օգնություն՝ գործը բարելավելու համար[16]։ Այդ օրերը նշանավորվում էին նաև նրանով, որ բացվում էին անգրագիտության վերացման նոր խմբեր, կազմակերպվում էին նոր լիկկայաններ։

Հատկապես մեծ ուշադրություն էր նվիրվում բնակչության շրջանում ագիտացիոն աշխատանքի ծավալմանը։ Սովետների կողմից հրապարակվում են լոզունգներ, կոչեր և պլակատներ, որոնք լայն տարածում էին ստանում բնակչության շրջանում։ Ամենուր կարելի էր կարդալ ժողովրդին ուղղված այսպիսի կոչեր. «Միավորվենք միահամուռ կերպով հաղթահարելու խավարը», «Զինենք յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու գիտության զենքով», «Գրագետ աշխատավորը ավելի արագ կընթանա դեպի կոմունիզմ», «Գրագետ, դու անգրագետին պարտք ունես, սովորեցրու նրան»։

Գնալով ավելանում էին լիկկայանների քանակը և գրանցում սովորողների թիվը։ Զանգեզուրի գավառային գործադիր կոմիտեի 1924 թ. հոկտեմբերի հաշվետվությունում ասված է, որ գավառում գործում են 35 լիկկայաններ, իսկ ըստ նույն թվականի դեկտեմբեր ամսվա հաշվետվության, լիկկայանների թիվը հասնում է 58-ի[17]։ Նոր Բայազետի գավառում 1923 թ. գործող 16 լիկկայանների փոխարեն 1924 թ. գործում էր 46-ը[18]։ Էջմիածնի գավառային գործադիր կոմիտեն 1924 թ. մարտի 29-ին որոշում է սեփական միջոցներով բաց անել անգրագիտության վերացման 20 նոր կայան և պատշաճ վարձատրել ուսուցիչներին[19]։ Ալավերդու (այժմ Թումանյան) շրջանային գործադիր կոմիտեն 1924 թ. ապրիլին պղնձամոլիբդենային գործարանի բանվորների համար բացում է անգրագիտության վերացման 6 խմբակ[20]։

Անգրագիտության վերացման աշխատանքների ընդհանուր համակարգում տեղական սովետները զգալի տեղ էին հատկացնում նաև զինակոչիկների անգրագիտության վերացմանը։ Հանրապետության սովետներին կից կազմակերպվում են այդ խնդրով զբաղվող հատուկ հանձնաժողովներ։ Այսպես, Էջմիածնի գավառային գործադիր կոմիտեն 1923 թ. նոյեմբերի 28-ին, քննար-

16 Նույն տեղում, ֆ. 133, ց. 1, գ. 401, թ. 28։

17 Նույն տեղում, ֆ. 132, ց. 1, գ. 60, թ. 74, 89։

18 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 845, թ. 33։

19 «Խորհրդային Հայաստան», 2. IV. 1924։

20 Նույն տեղում, 15. IV. 1924։

եելով տինակոչիկների անգրագիտության վերացման հարցը, որոշում է այդ աշխատանքների ղեկավարման համար ստեղծել գավառային հանձնաժողով[21]։ Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում կարմիր բանակի զորամիավորումների, մասնավորապես հայկական դիվիզիայի մարտիկների անգրագիտության վերացմանը։

Հայաստանի սովետների IV համագումարը (1925 թ. մարտ) գոհունակությամբ արձանագրում է անգրագիտության վերացման գործում հանրապետությունում ձեռք բերված նվաճումները։ Այսպես, եթե 1922—23 ուսումնական տարում հանրապետությունում գործել են 316 լիկկայաններ՝ 6403 ունկնդիրներով, ապա 1925 թ. լիկկայանների թիվը հասնում է 505-ի, իսկ ունկնդիրների թիվն անցնում է 14 հազարից[22]։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից սկսած հանրապետության տեղական սովետները ձեռնամուխ եղան նաև ազգային փոքրամասնությունների անգրագիտության վերացման գործին։ Արդեն 1923 թ. միայն Երևանի գավառում գործում էին ազգային փոքրամասնության յոթ լիկկայաններ[23]։ 1924 թ. այդպիսի չորս լիկկայաններ էին գործում Զանգեզուրի գավառում[24], իսկ 1925 թ. Երևանի գավառում բացված 9 նոր լիկկայաններից 6-ը ազգային փոքրամասնության լիկկայաններ էին[25]։ Հատկանշական էր, որ դրանց թիվը գնալով աճում էր։ 1928 թ. հանրապետությունում գործում էին 61 ադրբեջանական, 13 ռուսական, 8 քրդական, մեկական հունական և ասորական լիկկայաններ, որոնցում գրագիտություն էր սովորում 2155 մարդ[26]։

Հանրապետության սովետներն արժանի ներդրում ունեցան նաև կուլտարշավի աշխատանքներում, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ գլխավորելով դրա կազմակերպումն ու անցկացումը։ Այսպես, Հայաստանի սովետների ակտիվ մասնակցությամբ ընթացավ 1928 թ. հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 1-ը հանրապետությունում անցկացված անգրագիտության վերացման շաբաթը։ Այդ ընթացքում սովետներն իրագործեցին միջոցառումների լայն ծրագիր։ Այն փաստը, որ հայտարարված շաբաթվա չորրորդ օրը՝ հոկտեմբերի 28-ը, հատկացվել էր տեղական սովետներին, վկայում է այդ գործում տեղական սովետների մեծ դերի մասին։

Սովետները հատուկ նշանակություն էին տալիս ուսուցիչների հետ տարվող աշխատանքներին, մասնավորապես նպատակ հետապնդելով ուսուցիչներին ավելի լայնորեն ներգրավել անգրագիտության վերացման աշխատանքներին և նրանց դարձնել դրա կենսագործման կարևոր օղակներից մեկը։ Դրա շնորհիվ հանրապետության ուսուցչությունն անմնացորդ նվիրվեց անգրագիտության վերացման գործին, այն համարելով իր քաղաքացիական պարտքը։ Այսպես, Ալեքսանդրապոլի գավառի Թալինի շրջանի ուսուցիչներն իրենց հիմնական աշխատանքից դուրս օրական երկու ժամ տրամադրում էին հասակավորների անգրագիտության վերացմանը[27]։

Այս ամենով հանդերձ, Հայաստանի ազգաբնակչության գրագիտության աստիճանը դեռևս հեռու էր բավարար համարվելուց։ 1929 թ. ապրիլին կայացած Հայաստանի սովետների VI համագումարը, լսելով լուսավորության ժողկոմ Ա. Մռավյանի զեկուցումը, արձանագրում էր, որ հանրապետությունում դեռևս ստվար թիվ են կազմում անգրագետները։ Եվ չնայած այն բանին, որ 1925—1926 թթ. համեմատությամբ 1929 թ. մոտ տասը հազարով գրագետ մարդկանց թիվը ավելացել էր, այնուամենայնիվ անգրագիտության վերացման

---

21 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 133, ց. 1, գ. 22, թ. 243։

22 «ՀՍԽՀ Խորհուրդների չորրորդ համագումարը», Երևան, 1925, էջ 26։

23 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 135, թ. 65։

24 Նույն տեղում, ֆ. 132, ց. 1, գ. 66, թ. 74։

25 Նույն տեղում, ֆ. 133, ց. 1, գ. 210, թ. 112։

26 Նույն տեղում, ֆ. 112, ց. 3, գ. 513, թ. 444։

27 Նույն տեղում, ց. 2, գ. 1059, թ. 215։

խնդրի իրագործումը մնում էր որպես կարևորագույն գործ, «որից չենք կարող խուսափել և որը պետք է կատարել»,— նշվում էր համագումարի բանաձևում[28]։ Համագումարը տեղական սովետներին պարտավորեցրեց լրջորեն զբաղվել անգրագիտության վերացման գործով։

1929 թ. մայիսի 17-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմն ընդունեց «Անգրագիտության վերացման աշխատանքների մասին» որոշումը, որտեղ հանգամանորեն վերլուծվում էին այդ ուղղությամբ Միությունում կատարվող աշխատանքները, նշվում այն ուղիներն ու միջոցները, որոնք պետք է ապահովեին անգրագիտության վերացման աշխատանքների արմատական բարելավումը։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմն անհրաժեշտ էր համարում անգրագիտության վերացման ուսուցման ողջ սիստեմի արմատական վերակառուցումը։ Առաջնորդվելով ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով, Հայաստանի տեղական սովետները, կուսակցական կազմակերպությունների գլխավորությամբ, լայն աշխատանք ծավալեցին անգրագիտության վերացումը որակական նոր աստիճանի բարձրացնելու ուղղությամբ։ Այսպես, անգրագիտության վերացման հարցը հատուկ քննարկվում է Հայաստանի Կենտգործկոմի նախագահության 1929 թ. հոկտեմբերի 9-ի նիստում, որը հանրապետության տեղական սովետներին պարտավորեցնում էր կոնկրետ միջոցառումներ ձեռնարկել անգրագիտության վերացման գործում եղած թերությունները վերացնելու ուղղությամբ։ Կենտգործկոմի նախագահությունը մասնավորապես առաջարկում էր խիստ հսկողություն սահմանել ընդունված որոշումների անշեղ կենսագործման ուղղությամբ, լրիվ օգտագործել այդ նպատակին հատկացված գումարները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել անգրագիտության վերացմամբ զբաղվող բոլոր օղակների միջև գործնական կապ հաստատելու համար[29]։ Լենինականի շրջանային գործադիր կոմիտեի 1930 թ. հաշվետվության մեջ կարդում ենք. «այս ուսումնական տարում մեր աշխատանքի առանցքն է կազմել անգրագիտության վերացման գործը։ Գրագիտության դպրոցների ցանցը և նրանց բյուջեն աճել է մեծ չափով»[30]։ Ղափանի շրջանում նախորդ տարվա 26 լիկկայանի փոխարեն 1929 թ. կար 40 լիկկայան[31]։ Նոր Բայազետի գավգործկոմի 1929 թ. հաշվետվությունը հաստատում է, որ գավառում լայն ծավալ է ստացել նոր լիկկայանների բացումը[32]։ Զանգեզուրի գավառային գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ 1929 թ. դեկտեմբերի 8—15-ը գավառում անցկացվում է անգրագիտության վերացման շաբաթ։ Այդ օրերին գավառի բոլոր գյուղերում հրավիրվում են համայնքների ժողովներ, որոնցում մշակվում են կոնկրետ պլաններ՝ գրագիտության տարածման ուղղությամբ։ Գավգործկոմի որոշմամբ սննդի օբյեկտների եկամուտի 10%-ը հատկացվում է անգրագիտության վերացման ֆոնդին[33]։ Գորիսի շրջանային սովետը շրջանի գյուղերն է ուղարկում մանկավարժական տեխնիկումի ուսանողներից կազմված հատուկ բրիգադներ՝ լիկկայաններին անմիջական օգնություն ցույց տալու համար[34]։ Գորիսի շրջանի լիկկայաններում 1931 թ. ընդգրկված էր շուրջ 3 հազ. մարդ. 1929 թ. 25 լիկկայանների և 57 խմբակի փոխարեն գործում էին համապատասխանաբար 30 լիկկայան և 162 խմբակ[35]։ Ստեփանավանի շրջանում, որը մինչ այդ առանձնապես աչքի չէր ընկնում անգրագիտության վերացման աշխատանքների կազմակերպման գործում, 1931 թ. կար 114 լիկկայան[36]։ Սիսիանի շրջանի միայն Անգեղակոթ գյուղում գործում էր 11 լիկկայան[37]։ Այսպի-

28 Նույն տեղում, ց. 3, գ. 15, թ. 110։
29 Նույն տեղում, ց. 2, գ. 464, թ. 2։
30 Նույն տեղում, ֆ. 131, ց. 7, գ. 54, թ. 112։
31 Նույն տեղում, ֆ. 132, ց. 1, գ. 620, թ. 2—8։
32 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 960, թ. 52։
33 Նույն տեղում, ց. 4, գ. 520, թ. 20։
34 Նույն տեղում, գ. 520, թ. 20։
35 Նույն տեղում, ց. 2, գ. 370, թ. 97։
36 Նույն տեղում, գ. 1029, թ. 38։
37 «Խորհրդային Հայաստան», 15. II. 1931։

ով, չնայած անգրագիտության վերացման գործում առկա ոչ քիչ թերություններին ու դժվարություններին, սովետական իշխանության առաջին տասնամյակում հանրապետության սովետների նպատակաուղղված գործունեության շնորհիվ Սովետական Հայաստանի բնակչության գրագիտության մակարդակը զգալիորեն բարձրացավ։

Անգրագիտության վերացման ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքները կոորդինացնում էր Հայաստանի Կենտգործկոմը։ Նրա նախագահության նիստերում պարբերաբար քննության էին առնվում անգրագիտության վերացման հետ կապված հարցերը։ 1932 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի Կենտգործկոմը տեղական սովետներին ուղղած հրահանգ-շրջաբերականում նրանց պարտավորեցնում էր պատշաճ ուշադրություն դարձնել անգրագիտության վերացման աշխատանքներին՝ գտնելով, որ անթույլատրելի է անտարբերությունն այդպիսի կարեոր գործերում։ Նույն ամսի 22-ին Կենտգործկոմը որոշում է կայացնում ԿԱՆ-ի ընկերության նյութական միջոցների ավելացման մասին[38]։

1932 թ. նոյեմբերի 11-ին ՀամԿԳԿ և ԱՍՖՍՀ Կենտգործկոմի նախագահությունները որոշում են ընդունում «Հիմնական տնտեսական կամպանիաները ավարտած առաջավոր գյուղական խորհուրդներին պարգևատրելու մասին»[39]։ Սովետների պարգևատրման կարևոր ցուցանիշ է դիտվում նաև նրանց գործունեությունն անգրագիտության վերացման ուղղությամբ։ Այդ որոշումից հետո հանրապետության սովետների միջև ծավալվում է սոցմրցություն, որի հետևանքով հանրապետությունում անգրագիտության վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքները նոր թափ են ստանում։ Մեղրու շրջգործկոմի նախագահության 1932 թ. դեկտեմբերի 5-ի նիստն արձանագրում է, որ շրջանի Լիճք, Կալեր, Ներքին Արևիկ, Մեղրի, Կարճևան, Վարհավար, Փուշկադ (այժմ Այգեձոր), Ագարակ և Գյուղեմնիս գյուղերը դարձել են համատարած գրագիտության գյուղեր[40]։ Ղափանի շրջանային գործադիր կոմիտեի 1932 թ. նոյեմբերի 4-ի որոշման մեջ կարդում ենք. «Աշխատանքի առանցք դարձնելով կուսակցության մարտական պահանջները՝ անգրագիտության վերացման ասպարեզում ձեռք բերվեցին զգալի հաջողություններ։ Շրջանի լիկկայաններում ընդգրկված են 7500 անգրագետներ։ Ծրագրվում է առաջիկա տարիներին լիովին ավարտել անգրագիտության վերացումը շրջանում»[41]։

1934 թ. հուլիսի 13-ին Հայաստանի Կենտգործկոմի նախագահությունը, քննարկելով անգրագիտության վերացման աշխատանքների ընթացքը, արձանագրում է, որ հնգամյակի ընթացքում ձեռք են բերվել զգալի հաջողություններ. մի շարք շրջկենտրոններ և գյուղեր մոտեցել են անգրագիտության լիովին վերացմանը։ Սակայն, ինչպես նշվում էր նույն արձանագրության մեջ, առանձին շրջաններում անգրագիտության վերացման պլանները թերակատարվում էին. հանրապետությունում հաշվվում էր 102.941 անգրագետ և կիսագրագետ[42]։ Սա խոսում է այն մասին, որ անգրագիտության վերացման գործում սովետների աշխատանքում դեռևս կային նկատելի թերություններ։ Նախ, անգրագիտության վերացման համար մղված պայքարում դեռևս անբավարար էին մասսայական ագիտացիան և բացատրական աշխատանքները։ Ոչ բոլոր տեղական սովետներն էին, որ լիկկայանները ապահովում էին շենքերով, վառելիքով, կահույքով, գրենական պիտույքներով։ Անգրագիտության վերացմանը խանգարող մյուս հանգամանքը բնակչության որոշ մասի բնակության վայրերի հաճախակի փոփոխություններն էին։ Այսպես, անգրագետ քաղաքացին իր բնակության վայրը փոխելով դուրս էր գալիս տվյալ վայրի հաշվառումից և մեծ ձգձգումներ էին ստեղծվում նրան բնակության նոր վայրում հաշվառման ենթարկելու ու լիկկայանում ընդգրկելու հարցում։ Այսպես, օրինակ, Գորիսը

38 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 4, գ. 525, թ. 20։

39 Նույն տեղում, ց. 1, գ. 543, թ. 84։

40 Նույն տեղում, ց. 2, գ. 1094, թ. 12։

41 Նույն տեղում, ց. 2, գ. 1104, թ. 151։

42 Նույն տեղում, գ. 462, թ. 19։

1932 թ. հայտարարվել էր համատարած գրագիտության քաղաք, բայց տարվա վերջին շրջանային սովետի հաշվետվության մեջ ասվում էր, որ անգրագիտության իսպառ վերացման գործին «բացասաբար է ազդել աղգաբնակչության հոսունությունը»[43]։ Վիճակը նույնն էր նաև Երևանում։ 1933 թ. ապրիլի 21-ին Երևանի քաղաքային սովետը ԿԱՆ-ի ընկերությանը պարտավորեցնում էր «հաշվառման միջոցով հայտնաբերել քաղաքում եղած նորեկ անգրագետներին և կիսագրագետներին և նրանց ընդգրկել լիկկայաններում»[44]։ Անգրագիտության վերացման անբավարար վիճակի մյուս պատճառն առանձին շրջաններում լիկկայանների աշխատանքային ռեժիմի խախտումներն էին։ Հայաստանի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից բազմիցս նշվել են Հրազդանի, Ապարանի, Մարտունու, Վեդու, Բասարգեչարի (այժմ Վարդենիս) և Թալինի շրջանային գործկոմների անբավարար աշխատանքը, որոնք պատշաճ «չեն գլխավորել և ղեկավարել այդ կարևոր բնագավառը»[45]։ Սովետական Հայաստանում անգրագիտության վերացման առանձնահատուկ դժվարություններից էր և այն, որ սկսած 1920-ական թվականների սկզբներից պարբերաբար տեղի էր ունենում սփյուռքահայերի ներգաղթ մայր հայրենիք։ Ներգաղթի նոր հոսք տեղի ունեցավ 1930-ականի առաջին կեսին և առավել զանգվածային դարձավ նախապատերազմյան տարիներին։ Ներգաղթածների մեծ մասը գալիս էին Միջին ու Մերձավոր արևելքի հայկական գաղթօջախներից և ճնշող մասով անգրագետ էին։ Այս հանգամանքը հարկադրում էր մի շարք վայրերում, որտեղ անգրագիտությունը համարվում էր վերացված, վերադառնալ այդ հարցին։

Հաշվի առնելով իրադրության ողջ լրջությունը և առկա բոլոր ռեալ հնարավորությունները՝ սովետներն ավելի են ակտիվացնում իրենց գործունեությունը, որի շնորհիվ հանրապետությունում կտրուկ կրճատվում է անգրագետների և կիսագրագետների թիվը։ Հայաստանի սովետների VIII համագումարը (1935 թ. հունվար), ի մի բերելով անգրագիտության վերացման բնագավառում հանրապետությունում կատարված աշխատանքները, գոհունակությամբ արձանագրում էր, որ եթե 1926 թ. հանրապետությունում գրագետ էր աղգաբնակչության 22,7%-ը, իսկ 1931 թ. 50%-ը, ապա 1934 թ. գրագետ մարդկանց տոկոսը անցնում էր 80-ից[46]։ Ելույթ ունենալով Սովետական Հայաստանի տասնհինգամյակին նվիրված Կենտգործկոմի հոբելյանական նստաշրջանում, ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը նշել է, որ հանրապետության բնակչության գերակշռող մասը, «առաջ գրել-կարդալ չգիտեր, իսկ այսօր մտել է լիարյուն կուլտուրական, հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ»[47]։

Ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյակի տարիներին սոցիալիստական շինարարության աճը և սովետական պետության տնտեսական հզորացումը նյութական ամուր հիմք ստեղծեցին անգրագիտության վերացումն իր ավարտին հասցնելու համար։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ՍՍՀՄ Ժողկոմխորհը 1936 թ. փետրվարի 26-ին որոշում ընդունեցին «Անգրագիտության և կիսագրագիտության ուսուցման աշխատանքների մասին»։ Դրանում ի մի էր բերվում մասսայական անգրագիտության վերացման գործում ձեռք բերված հաջողությունները, նշվում, որ տասնյակ միլիոնավոր աշխատավորներ անցել են անգրագիտության վերացման ցանցով, սովորել են գրել ու կարդալ։ Որոշումը հատկապես լուրջ խնդիրներ էր դնում սովետների առջև։ Նրանցից պահանջվում էր լիկկայաններն ապահովել անհրաժեշտ շենքերով, վառե-

---

43 Նույն տեղում, ց. 3, գ. 438, թ. 8։

44 Նույն տեղում, ֆ. 193, ց. 8, գ. 98, թ. 58։

45 Նույն տեղում, ֆ. 112, ց. 2, գ. 1214, թ. 12։

46 Նույն տեղում, ց. 3, գ. 41, թ. 64։

47 «Խորհրդային Հայաստան», 30. XI. 1935։

լիքով, ուսումնական կահույքով, դասագրքերով և գրենական պիտույքներով։ Անգրագիտության վերացման հետագա աշխատանքների իրագործումը դրվում է տեղական սովետներին կից գործող անգրագիտության վերացման սեկցիաների վրա[48]։ 1936 թ. մարտի 14-ին ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը, ելնելով Համկ(ր)Կ Կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. փետրվարի 26-ի որոշումից, հանրապետության տեղական սովետներին առաջարկեց սովետներին կից ստեղծել անգրագիտության և կիսագրագիտության վերացման սեկցիաներ։ Դրանց առաջնահերթ խնդիրը համարվում էր տեղերում անգրագետների և կիսագրագետների ճշգրիտ հաշվառում կատարելը և անգրագիտությունը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը[49]։ Դրանից հետո հանրապետությունում նոր ուժով ծավալվեց սոցիալիստական մրցությունը՝ շրջանը-շրջանի, գյուղը-գյուղի, խմբակը-խմբակի հետ։ Գորիսի շրջանային գործադիր կոմիտեի կողմից այդ բնագավառում աչքի ընկած շատ ուսուցիչներ և նույնիսկ նախկին անգրագետներ արժանացան պարգևների և խրախուսանքի։ 1937 թ. փետրվարի 25-ին Միկոյանի (այժմ Եղեգնաձոր) շրջանային սովետի գործադիր կոմիտեն նշում էր շրջանի մի շարք գյուղական սովետների օրինակելի աշխատանքը՝ անգրագետներին և կիսագրագետներին գիշերային դասընթացներում ընդգրկելու, սոցիալիստական լայն մրցություն ծավալելու գործում[50]։

1937—1938 թթ. հանրապետության շատ քաղաքներ և շրջաններ մեկը մյուսի ետևից զեկուցում են անգրագիտության վերացման գործում ձեռք բերված հաջողությունների մասին։ Շատերն էլ զեկուցում էին այն մասին, որ իրենց մոտ հաջողությամբ ավարտվել է անգրագիտության վերացումը։ 1939 թ. անցկացված համամիութենական մարդահամարի տվյալներով Սովետական Հայաստանի բնակչության 83,7%-ը գրագետ էր։

Այսպիսով, ինչպես ամբողջ Միությունում, այնպես էլ Հայկական ՍՍՀ-ում, կուլտուրական հեղափոխության խոշոր նվաճումներից էր անգրագիտության վերացումը։ Երկրորդ հնգամյակի վերջին—երրորդ հնգամյակի սկզբներին Սովետական Հայաստանը դարձավ բարձր գրագիտության հանրապետություն։ Այդ դժվարին, բայց հույժ կարևոր ու շնորհակալ գործում իրենց արժեքավոր ներդրումը կատարեցին նաև Հայաստանի սովետները։

МЕСТНЫЕ СОВЕТЫ АРМЕНИИ В БОРЬБЕ ЗА ЛИКВИДАЦИЮ НЕГРАМОТНОСТИ (1921—1940)

АЙКАЗ ОГАНЕСЯН

Резюме

Первоочередной задачей культурной революции в 1920—1930 годах была ликвидация неграмотности. С первых же дней становления Советской власти местные советы Армении приступили к ликвидации неграмотности. Они развили широкую деятельность для обеспечения ликбезпунктов зданиями и преподавателями, необходимыми учебниками, пособиями и т. д.

Под руководством Компартии Армении местные советы с успехом преодолели трудности в деле ликвидации неграмотности, и в конце второй пятилетки Советская Армения стала республикой всеобщей грамотности.

---

48 «Правда», 27. II. 1936.

49 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 641, թ. 1։

50 Նույն տեղում, գ. 1320, թ. 66։